



Ազդարարության Trumpet's Sound **փող**

56-րդ ՏԱՐԻ, ԱՄՍՏՐԱԼԻԱ
ՄԱՐՏ - ԱՊՐԻԼ 2025



«ԱԶԳԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՓՈՂ»
երկամյա հոգեւոր թերթ

Պատասխանատու խմբագիր՝
հովիւ Հրաչ Գույունեան

ACM AUSTRALIA
PO BOX 1593,
CHATSWOOD NSW 2057
EMAIL: hkiujian@acmaust.org
URL: www.acmaust.org



Բովանդակություն

Ան կենդանի է 3
Հովիւ՝ Հրաչ Գույունեան

Իր բերանը բանալով կը սորվեցներ (2) . . 5
Նէլ Պոլման

Ի՞նչ նշանակություն ունի յարությունը
ինծի համար (1) 7
Տոն Սթորմ

Մանկանց Աւետարանչության
Ընկերակցություն 10
ՍԿԸ

Ամբողջ օրով գործող քրիստոնեաներ . . 12
Վեր.՝ Յովսէփ Յովսէփեան

Մանկապատանեկան ծառայության
կարեւորությունը 14
ACM

Կազմի նկարը՝ Ծիծեռնակաբերդի
հուշահամալիր, Երեւան, Հայաստան

- Ծնորհակալություն կը յայտնենք Տիրոջը՝ Անոր անսահման բարութեան եւ սիրոյ համար:

Կը խնդրենք աղօթել՝

- մեր աշխատակիցներուն համար եւ Տիրոջ դաշտին մեջ անոնց նուիրումով կատարուած ծառայութեան համար,
- մեր խնամքին տակ գտնուող հիւանդներուն եւ տկարներուն առողջութեան ու զօրութեան համար,
- Սուրբ Զատիկի առիթով կազմակերպուած մանուկներու ծառայութիւններուն համար,
- սեպտեմբերին Հայաստան մեկնող առաքելական խումբին ճամբորդութեան եւ առաքելութեան յաջողութեան համար,
- 27-րդ բեռնարկոյին Հայաստան ապահով եւ անվտանգ ժամանումին համար,
- ACM-ի ծառայութիւններուն համար՝ Հայաստանի, Լիբանանի, ինչպէս նաեւ այժմ Վրաստանի մէջ:

Սոյն թերթի ծախսերը կը հոգացուի հաւատացեալներու սրտաբուխ նուէրներով:

Ան կենդանի է

«Յիսուս ըստ անոր. «Ես եմ յարութիւնն ու կեանքը: Ան որ ինծի կը հաւատայ, թէեւ մեռնի՝ պիտի ապրի. եւ ան որ կենդանի է ու ինծի կը հաւատայ, յաիտեան պիտի չմեռնի: Դուն կը հաւատաս՞ աստր»» (Յովհ. 11:25-26):

Կա՞յ կեանք մահէն ետք: Այո՛:

Աստուածաշունչը մեզի կը սորվեցնէ, որ մեր Տէր Յիսուս Քրիստոսը խաչին վրայ մեռնելէ եւ թաղուելէ ետք, յարութիւն առաւ: Հին Եգիպտացիները կը հաւատային, որ մահէն ետք կեանք կար: Անոնք կը գմռէին իրենց մեռելներուն մարմինները եւ զանոնք կը թաղէին ոսկիի ու սնունդի հետ՝ յոյսով, որ օր մը կեանքի պիտի վերադառնան: Արդէն 5000 տարի անցած է, բայց անոնցմէ ո՛չ մէկը կեանքի չէ վերադարձած: Միայն Քրիստոսն է ճշմարիտ Յարութիւնն ու Կեանքը: Այս խոստումը բոլոր հաւատացեալներուն համար է:

«Բայց մեր քաղաքականութիւնը երկինքն է, ուրկէ կը սպասենք Փրկչին, Տէր Յիսուս Քրիստոսին, որ պիտի նորոգէ մեր խոնարհ մարմինը՝ իր փառաւոր մարմնին կերպարանակից ըլլալու, այն զօրութիւնովը որ կարող է ամէնքը իրեն հնազանդեցնել» (Փիլիպ. 3:20-21):

Մեր բոլոր մարմնաւոր տկարութիւնները պիտի վերանան: Բոլոր անոնք, որոնք տառապած են քաղցկեղէ, յիշողութեան խանգարումէ կամ յօդաբորբէ, այլեւս այդ ցաւերը պիտի չունենան: Մենք պիտի ըլլանք Տիրոջ ներկայութեան մէջ՝ լեցուն սէրով ու փառքով: Այլեւս մեղք, պատերազմ, նախանձ կամ ցաւ պիտի չ'ըլլայ: Պիտի ըլլայ յաւիտեանական խաղաղութիւն Աստուծոյ հետ:

«Եւ ինչպէս հողեղէնին կերպարանքը հազեր ենք, երկնաւորին կերպարանքն ալ պիտի հազնինք: Բայց այս կ'ըսեմ, եղբայրներ, որ մարմին ու արիւն Աստուծոյ թագաւորութիւնը չեն կրնար ժառանգել. ո՛չ ալ սպակաւնութիւնը կը ժառանգէ անսպակաւնութիւն: Ահա ձեզի խորհուրդ մը կ'ըսեմ. «Ամէնքս պիտի չննջենք, բայց ամէնքս ալ պիտի փոխուինք, յանկարծակի աչք զոցել քանալու մէջ՝ վերջին փողին հնչուելու ատենը. որովհետեւ փողը պիտի հնչուի ու մեռելները յարութիւն պիտի առնեն առանց սպակաւնութեան, մենք ալ պիտի փոխուինք»» (Ա Կորնթ. 15:49-52):

Բոլոր անոնք, որոնք վերստին ծնած են եւ Տէրը ընդունած են իրենց սրտին մէջ, Աստուած անոնց կը խոստանայ ոչ միայն նոր սկիզբ այս աշխարհին մէջ՝ Յիսուս Քրիստոսի հետ, այլ նաեւ յաւիտենական կեանք՝ Երկնքի մէջ:

«Սրտերնիդ չխռովի. Աստուծոյ հաւատացէք, ինծի ալ հաւատացէք: Իմ Հօրս տունը շատ բնակարաններ կան. ապա թէ ոչ՝ ես ձեզի պիտի ըսէի՝ «Հիմա կ'երթամ, որ ձեզի տեղ պատրաստեմ»: Եւ եթէ երթամ ու ձեզի տեղ պատրաստեմ, նորէն պիտի գամ եւ ձեզ քովս առնեմ, որպէս զի ո՛ր որ ես եմ՝ դուք ալ հոն ըլլաք» (Յովհ. 14:1-3):

Ասիկա այն խոստումն է, որ մեզ կը վստահեցնէ մեր յաւիտենական ապագան՝ Անոր հետ, որ մեզ սիրեց եւ Իր կեանքը մեզի համար տուաւ խաչին վրայ:

Այո՛, Ան պիտի վերադառնայ: Դո՛ւն պատրաստ ես: Սրտով եւ հոգիով պատրաստ ես Անոր հանդիպելու:

«Բայց երբ այս ապականացու մարմինը անապականութիւն հազնի եւ այս մահկանացուն անմահութիւն հազնի, այն ատեն պիտի կատարուի այն խօսքը, որ գրուեցաւ. «Մահը յաղթութեան մէջ ընկղմեցաւ»: «Ո՛ր է, ո՛վ մահ, քու խայթոցդ, ո՛ր է, ո՛վ գերեզման, քու յաղթութիւնդ»: Մահուան խայթոցը մեղքն է ու մեղքին ոյժը՝ օրէնքը: Բայց գոհութիւն Աստուծոյ, որ մեզի յաղթութիւն կու տայ մեր Տէր Յիսուս Քրիստոսին ձեռքով» (Ա Կորնթ. 15:54-57):

Ամէն: Թող յարութեան յոյսը լեցնէ ձեր սիրտը ուրախութեամբ:

Հ. Գ.

«Ամէն բան առանց տրտունջներու ու վիճաբանութիւններու ըրէք. որպէս զի ըլլաք անբիծ ու անարատ, Աստուծոյ որդիներ առանց մեղադրանքի, կամակոր ու խոտորեալ ազգին մէջ, որոնց մէջ դուք լուսաւորներու պէս կը փայլիք աշխարհի մէջ»:

Փիլիպ. 2:14-15

Իր բերանը բանալով կը սորվեցնէր անոնց (2)

Մատթեոս 5-րդ գլուխ

Մաս 2. Յիսուսի աշակերտները

«Երանի՛ հոգիով աղքատներուն, վասն զի երկնքի թագաւորութիւնը անոնցն է»:

Լեռան քարոզին մէջ Տէր Յիսուսը ժողովուրդին չէր սորվեցնէր փրկութեան կամ մեղքի պատիժէն ազատուելու մասին, այլ՝ թէ ինչպիսին պէտք է ըլլայ Իրեն հետեւիլ ուզող աշակերտին կեանքը: Միայն քանի մը տարի ետք աշակերտները ամբողջովին պիտի հասկնային, թէ Յիսուս ինչպէս պիտի փրկէր իրենց մեղքերէն՝ Իր մահուամբ ու յարութեամբ: Այդ ատեն պիտի հռչակէն Անոր մահուան ու յարութեան գործութիւնը եւ թէ ինչպէս անհաւատը՝ հաւատքով կրնայ Աստուծոյ առաջ արդարանալ: Հիմա անոնք կը սորվին, թէ ինչ է ճշմարիտ արդարութիւնը:

Հոգիով աղքատներուն, ողբացողներուն, հեզերուն եւ արդարութեան ծարաւ ունեցողներուն երանելիութիւնը՝ Յիսուսի աշակերտները ըլլալու մէջ է: Անոնք կը գիտակցին իրենց հոգեւոր աղքատութիւնը եւ աշխարհի շացուցիչ եւ ունայն առաջարկներէն ու ցանկութիւններէն չեն խաբուիր: Գուցէ չեն գիտեր, թէ ինչպէս փոխել իրենց վիճակը, բայց իրենց հայեացքը ուղղուած է դէպի Յիսուսը:

«Երանի՛ ողորմածներուն, վասն զի անոնք ողորմութիւն պիտի գտնեն»:

Իր մեղաւորութիւնն ընդունած անձը պատրաստ է ուրիշներուն ներել ու ողորմել: Վրէժխնդրութեան կամ իր իրաւունքները պահանջելու փոխարէն՝ ան կը նախընտրէ ողորմութիւն ցոյց տալ: Ան տկար կամ վախկոտ չէ, այլ՝ մէկը, որ վստահութիւն ունի Աստուծոյ արդարութեան ու հաւատարմութեան վրայ:

«Երանի՛ անոնց որ սրտով մաքուր են, վասն զի անոնք պիտի տեսնեն Աստուած»:

Արդեօք հնարաւոր է կեղծ նպատակով կամ թաքուն շարժառիթով Յիսուսին հետեւիլ: Այդպիսի մտադրութիւնները շուտով կը բացա-

յայտուն: Բայց ան, որ անկեղծ սրտով սրբութիւն կը փնտռէ՝ չնայած իր տկարութիւններուն, պիտի մեծապէս պարգեւատրուի:

«Երանի՛ խաղաղութիւն ընողներուն, վասն զի անոնք Աստուծոյ որդիներ պիտի կոչուին»:

Աշակերտի անկեղծ փափաքը հետեւեալն է. «Թող որ Աստուծոյ ճշմարիտ գաւակը ըլլամ»: Այսպիսի մարդիկ խաղաղութիւն կը բերեն եւ ոչ թէ բախում: Ինչ որ սրտին մէջ կայ, կ'արտայայտուի նաեւ վերաբերմունքին մէջ:

«Երանի՛ անոնց որ հալածուած են արդարութեան համար, վասն զի երկնքի թագաւորութիւնը անոնցն է»:

Տէր Յիսուսը տակաւին չէր հանդիպած իշխանութիւններու բացայայտ ընդդիմութեանը, եւ հաւանաբար Անոր շուրջ գտնուող տղամարդկանց ու կանանց համար զարմանալի պիտի թուար, եթէ իշխանութիւնները մերժէին բարիք գործող եւ լաւ ուսուցում տարածող Ուսուցչին: Ան Իր աշակերտներուն կը պատրաստէր գալիք հալածանքներուն համար: Ան կը զգուշացնէր զիրենք, կը յիշեցնէր գալիք դժուարութիւններու մասին եւ վստահութիւն կուտար, որ պարգեւները իրենց կը սպասեն, եթէ մինչեւ վերջ համբերեն:

«Երանի՛ է ձեզի, երբ կը նախատեն ձեզ ու կը հալածեն եւ սուտ տեղը ամէն կերպ գէշ խօսքեր կը խօսին ձեր վրայ ինծի համար: Յնձացէք եւ ուրախ եղէք, վասն զի ձեր վարձքը շատ է երկինքը. քանզի այս կերպով հալածեցին ձեզմէ առաջ եղած մարգարէները»:

Ուրեմն, ովքե՛ր են այս աշակերտները: Անոնք հոգիով աղքատ, ողբացող, հեզ, արդարութեան ծարաւ, ողորմած, սրտով մաքուր եւ խաղաղասէր մարդիկ են: Աշխարհի համար աննշան կրնան թուալ, բայց Աստուծոյ համար՝ անոնք Իր գաւակներ են:

«Դուք էք երկրի աղը...»: Ինչպէ՞ս, բայց մենք աննշան մարդիկ ենք: Ինչո՞վ կրնանք պարծենալ:

«Դուք էք աշխարհի լոյսը...»:

Տէր Յիսուսը Իր աշակերտներուն նայեց ու տեսաւ այն փոխակերպումը, զոր Սուրբ Հոգին պիտի գործէր ի փառս Աստուծոյ՝ սովորական տղամարդկանց ու կանանց կեանքին մէջ: Անոնք պիտի ըլլա-

յին՝ ինչպէս քաղաք մը բլուրի վրայ՝ բոլորին տեսանելի: Անոնց լոյսը պէտք չծածկուէր:

Հնարաւոր է, որ մենք աւելի գուսպ եւ ինքնամփոփ կեանք մը ունինք: Գուցէ մեր համար անյարմար է յիշել, որ Տէրը սորվեցուց, թէ միմեանց հանդէպ սէրը աշխարհին ցոյց պիտի տայ, որ Իր աշակերտներն ենք (Յովհ. 13:34-35): Արդեօ՞ք աղը իր համը կորսնցուցած է: Արդեօ՞ք մեր լոյսը զամբիւղի տակ ծածկուած է: Այստեղ մարտահրաւէր մը կայ՝ ապրիլ այնպէս, որ մեր լոյսը տարածուի, եւ մենք չպէտք է անտեսենք այդ:

«Այնպէս թող լուսաւորուի ձեր լոյսը մարդոց առջեւ, որ տեսնեն ձեր բարի գործերը ու փառաւորեն ձեր Հայրը որ երկինքն է»:

Նէյլ Պուքման

Ի՞նչ նշանակութիւն ունի յարութիւնը ինծի համար (1)

Յովհ. 12:1-8, Ղուկ. 24:13-34

Մենք ամէն տարի կը նշենք Յարութեան տօնը, բայց երբեւէ մտածա՞ծ ենք, թէ ի՞նչ նշանակութիւն ունի այն մեր կեանքին համար: Արդեօ՞ք այն փոխած է մեզ:

Ընտանիքը Բեթանիայի մէջ

Եկէ՛ք անդրադառնանք Բեթանիայի մէջ ապրող ընտանիքին՝ Ղազարոսին եւ անոր քոյրերուն՝ Մարթային ու Մարիամին, որոնց կեանքը ամբողջովին փոխուեցաւ Տէր Յիսուսի յարութեան հրաշքով: Ղազարոսը մեռած էր, եւ անոր քոյրերը՝ յատկապէս Մարիամը, սրտով կոտորուած էին: Բայց Տէրը, Իր ժամանակին եւ Իր նպատակներուն համեմատ Ղազարոսին յարութիւն տուաւ: Ի՞նչպէս այս յարութիւնը փոխեց Բեթանիայի ընտանիքին:

Յովհ. 12:1-8 կարդալով՝ կը նկատենք մի քանի գործողութիւն: Ղա-

զարոսը նստած կը հաղորդակցուէր Տիրոջ հետ, Մարթան կը ծառայէր, իսկ Մարիամը երկրպագութիւն կ'ըներ:

Մեզմէ շատերը լաւ գիտեն այս պատմութիւնը: Ղազարոսը հիւանդ էր, եւ Տէրը ուշացուց Իր այցելութիւնը: Երբ Յիսուսը Բերանիա հասաւ, Ղազարոսը արդէն չորս օրուայ մեռել էր: Քոյրերը յուսախաբ էին ու մխիթարութեան պակաս ունէին: Անոնք համոզուած էին, թէ եթէ Տէրը աւելի շուտ հասներ, իրենց եղբայրը չէր մահանար: Անոնք յոյս չունէին: Բայց Տէրը ըրաւ այն, ինչ անոնք չէին նախատեսեր. Ան մեռած մարդուն յարութիւն տուաւ:

Ի՞նչ կը նշանակէր այս յարութիւնը այս ընտանիքի իւրաքանչիւր անդամի համար: Եկէ՛ք դիտարկենք Յովհ. 12:1-8-ը, ուր կը պատմուի խնճոյքի մը մասին՝ կազմակերպուած Յիսուսի պատուին, որուն ներկայ էին Ղազարոսը, Մարիամն ու Մարթան:

Ղազարոսը մեռած էր, բայց հիմա ողջ է: Ան նստած էր Տիրոջ կողքին: Մահացածը ողջ էր, եւ աւելի քան ողջ՝ որովհետեւ ան վայելեց Տիրոջ հետ հաղորդակցութիւնը: Ահա առաջին փոփոխութիւնը, որ յարութիւնը պետք է բերէ: Մենք, որ մեր մեղքերուն ու յանցանքներուն մէջ մեռած էինք կենդանացանք Քրիստոսով՝ հաւատալով Իր անուանը: Այդ ժամանակ մենք հաղորդակցութիւն կ'ունենանք Անոր հետ: Արդեօք վերստին ծնա՞ծ ենք:

Մարթային առաջին անգամ կը հանդիպինք Ղուկ. 10:38-42-ի մէջ: Ան Տիրոջը եւ Իր աշակերտներուն հիւրընկալած էր ու ճաշ պատրաստելու ամբողջ հոգսը իր վրայ վերցուցած էր: Իր քոյրը՝ Մարիամը, ոչ մէկ օգնութիւն չէր ցուցաբերեր: Ան Տիրոջ ոտքերուն մօտ նըստած՝ կը լսէր Անոր խօսքերը: Մարթան դժգոհելով կը մօտենայ Յիսուսին ու կը խնդրէ, որ Ան Մարիամին հրահանգէ իրեն օգնել: Բայց Տէրը կը պատասխանէ, որ Մարիամը ընտրած էր բարի բաժինը, որ անկէ պիտի չվերցուէր:

Ի՞նչ կը տեսնենք յետոյ՝ յարութենէն ետք: Մարթան դարձեալ կը ծառայէ (խնճոյքը այս անգամ Սիմոն բորոտին տան մէջ էր), բայց առանց բողոքի: Յարութիւնը փոխեց զինք: Ան կը ծառայէր Տիրոջ՝ առանց գանգատի: Արդեօ՞ք մենք կը ծառայենք առանց գանգատելու, թէ՞ անոնց կարգին ենք, որոնք կ'ըսեն՝ «Եկեղեցիին մէջ ոչ ոք մեզ

չ'օգնէր, ամէն բան մենք պէտք է ընենք»: Յարութիւնը պէտք է մեզ փոխէ՝ ինչպէս որ Մարթային փոխեց:

Մարիամը իրական աշակերտ էր: Դուկ. 10-րդ գլխուն մէջ ան կը նստի Տիրոջ ոտքերուն մօտ՝ սորվելու համար: Յովհ. 11-րդ գլխուն մէջ՝ կուլայ ու կը սգայ՝ Տիրոջ ոտքերուն մօտ: Յովհ. 12-րդ գլխուն մէջ՝ կ'երկրպագէ՝ դարձեալ Տիրոջ ոտքերուն մօտ: Յարութիւնը զինք վըշտացած աշակերտէն վերածեց երկրպագուի:

Այդուամենայնիւ քննադատեցին զինք: Յուդան եւ ուրիշ աշակերտներ զարմացան անոր նուիրումէն՝ զայն անիմաստ վատնում նկատելով: Բայց Տէրը պաշտպանեց զինք: Ան ըսաւ, որ այս արարքը Տիրոջ թաղման համար էր:

Ի՞նչ կը նշանակէր այս: Պարզ է՝ Մարիամը միակ անձն էր, որ կը գիտակցէր, թէ Տէրը պիտի մահանայ ու յարութիւն առնէ: Միւսները նոյնիսկ չհաւատացին, երբ Ան ըսաւ, որ պիտի մահանայ:

Մարիամը հասկցաւ, որ եթէ կը փափաքէր Տիրոջ մարմինը օծել թաղման համար, պէտք էր այդ ատեն ընէր: Յետոյ առիթ պիտի չունենար: Այս է պատճառը, որ յարութեան առաւօտեան Մարիամը խաչին կամ գերեզմանին քով չէր: Միւս կանայք գացին, բայց Մարիամը արդէն ցոյց տուած էր իր նուիրումը:

Յարութիւնը ի՞նչ փոփոխութիւն բերաւ անոր մէջ: Ան արդէն աշակերտ էր: Յետոյ միփթարուած աշակերտ դարձաւ, ապա՝ երկրպագու:

Մտածէ՛ք այն փոփոխութիւններուն մասին, որ մեռած մարդ մը՝ կենդանանալով, բերաւ այս ընտանիքին. մեռած մարդը կենդանի էր ու կը վայելէր կեանքի ու փառքի Տիրոջ հետ հաղորդակցութիւնը: Բողոքող կինը սորվեցաւ իր Տիրոջը ծառայել առանց բողոքի: Իսկ վըշտացած աշակերտը դարձաւ երկրպագու:

Էմմաուսի ճամբուն վրայ

Դուկասը կը պատմէ երկու անձերու մասին (տղամարդիկ կամ այր ու կին), որոնք կը քայլէին Երուսաղէմէն դէպի Էմմաուս: Անոնք խորապէս վշտացած էին: Ճամբուն վրայ Յիսուս երեւցաւ եւ սկսաւ քայլել իրենց հետ: Բայց անոնք զինք չճանչցան:

Տէրը հարցուց իրենց տխրութեան պատճառը: Անոնք պատասխանեցին, որ Ան՝ որուն Մեսիա կը կարծէին, երեք օր առաջ խաչուեցաւ: Անոնց սպասումները չ'իրականացան: Անոնք խորապէս յուսախար եւ շփոթուած էին՝ լսելով նաեւ որ կանայք գերեզման գացած էին ու զայն դատարկ գտած: Այդ ժամանակ Յիսուս սկսաւ բացատրել անոնց՝ Օրէնքէն ու Մարգարէներէն՝ Իր մասին գրուածները:

Երբ Էմմաուս հասան խնդրեցին, որ իրենց հետ մնայ: Երբ նստած էին հաց ուտելու, Տէրը օրհնեց հացը, կտրեց եւ իրենց տուաւ: Այդ պահուն ճանչցան զինք: Մահացածը ողջ էր:

Ի՞նչ փոփոխութիւն բերաւ յարութիւնը անոնց մէջ: Անոնք անմիջապէս կը վերադառնան Երուսաղէմ՝ ուրիշներուն պատմելու, որ Տէրը ողջ է: Յարութիւնը թարմացուցած էր անոնց ուրախութիւնը եւ զայն կ'իսկելու փափաքը: Արդեօք սա՞ է մեր արձագանքը յարութեան ճշմարտութեան:

Ի՞նչ նշանակութիւն ունի յարութիւնը ինծի համար: Արդեօք փոխա՞ծ է զիս:

Տոն Սթոքմըր

Մանկանց Աւետարանչութեան ընկերակցութիւն

Մանկանց Աւետարանչութեան Ընկերակցութիւնը միջեկեղեցական, անկախ, վերստին ծնած հաւատացեալներէ կազմուած կազմակերպութիւն մըն է, որու նպատակն է Ճշմարտութեան Խօսքը սորվեցնել տղոց ու աղջիկներուն՝ հաւատալով, որ Սուրբ Հոգին կրնայ զանոնք վերստին ծնեցնել եւ աճեցնել Տիրոջ շնորհքի մէջ՝ Խօսքի ներկայութեան միջավայրին մէջ: Վստահ ենք, որ Աւետարանը Աստուծոյ զօրութեան միակ աղբիւրն է՝ յուսաւորելու խաւար սրտերը եւ մտքերը:

Մեր աշխատանքներուն մէջ կ'օգտագործենք պարզ եւ ազդեցիկ

մեթոդներ՝ Աստուծոյ Խօսքը սորվեցնելու համար: Մենք պատգամը չենք փոխեր, այլ Խօսքը կը սորվեցնենք մանուկներուն մատչելի լեզուով:

Աստուծոյ շնորհքով տարեկան մօտաւորապէս 20,000 մանուկներու եւ պատանիներու կը հասնինք տարբեր ծրագիրներով՝ անհատական աւետարանչութիւն, բակային ճամբարներ, ճամբարներ, Բարի Լուրի խմբակներ, համագումարներ, առցանց ծառայութիւն:

Այս պահուն ունինք 12 աշխատակից, բայց մեր ծառայութիւնները միայնակ չենք ըներ: Մեր կողքին ունինք կամաւորներու մեծ բանակ մը, որոնք Տէր Յիսուսը կը սիրեն եւ կը փափաքին Իրեն պատուել՝ ծառայելով մանուկներուն:

Մեր նպատակներէն մէկն ալ այս է՝ պատրաստել ուսուցիչներ, որոնք լաւ մարզուած եւ պատրաստուած պիտի ըլլան մանուկներու հետ աշխատելու համար: Դասընթացքներու միջոցով զանոնք կը պատրաստենք եւ կը տրամադրենք ՄԱԸ գրականութիւնը, որպէսզի օգտագործեն իրենց ծառայութիւններուն մէջ:

Աստուծոյ պատգամը չէ փոխուած. այսօր ալ մանուկները կարիք ունին Աւետարանին: Ճշմարտութիւնը քարոզող եկեղեցիներու եւ քրիստոնէական կազմակերպութիւններու հետ կը գործակցինք՝ հասնելու եկեղեցի չյաճախող մանուկներուն ու պատանիներուն: Կը փափաքինք ներկայացնել մեր հիմնական ծառայութիւններէն երկուքը:

1) Բարի Լուրի խմբակներ

Մենք կը փորձենք կազմակերպել Բարի Լուրի խմբակներ հարեւանութեան մէջ ապրող մանուկներուն համար, որպէսզի այդ խմբակները մօտըլլան զանոնք: Խմբակները կ'անցկացուին շաբաթը մէկ անգամ, մէկ ժամ տեւողութեամբ, տարածքին մէջ բնակող հաւատացեալներէն մէկուն կամ խմբակի մանուկներէն մէկուն տան մէջ: Պատրաստուած ուսուցիչները կը սորվեցնեն Աստուծոյ Խօսքը՝ օգտագործելով գունաւոր տեսապատկերներ, գոց կը սորվեցնեն աստուածաշնչեան համարներ, կը երգեն հոգեւոր երգեր եւ այլ ուսուցողական ու խաղային գործունէութիւններ: Մանուկները ուրախութեամբ կը մասնակցին այս խմբակներուն: Այս խմբակը եկեղեցիէն դուրս կատարուող ծառայութիւն մըն է եւ արդիւնաւետ միջոց՝ հասնելու այն մանուկներուն,

որոնք տարբեր պատճառներով չեն կրնար եկեղեցի այցելել:

2) Ճամբարներ

2011 թուականին սկսեալ ճամբարներ կը կազմակերպենք: Փառք կուտանք Տիրոջը, որ 2020 թ.-ին ունեցանք ճամբարի սեփական տարածք մը, որ մեծ պարգև մըն էր մանուկներուն եւ պատանիներուն համար: Ճամբարը լաւագոյն վայրը կը հանդիսանայ, ուր անհաւատ մանուկները կը հանդիպին իրենց Փրկչին հետ: Այստեղ մանուկներն ու պատանիները կ'ապրին քրիստոնէական միջավայրի մէջ, կը կտրուին տարբեր զբաղումներէ եւ կը վայելեն իրենց մանկութիւնը: Ճամբար կուգան նաեւ հաւատացեալ մանուկներ, որոնք կը մեծնան Քրիստոսի շնորհքին եւ գիտութեան մէջ: Մասնակիցները կ'ընկերանան, եւ ճամբարէն ետք կը սկսին եկեղեցի այցելել՝ շարունակելով սորվիլ Տիրոջ Խօսքը եւ Տէր Յիսուսի հետ քայլելը:

Այս երկու ծառայութիւններէն բացի, այլ ծառայութիւններ ալ ունինք: Այս աշխատանքները չէր կրնար յաջողութեամբ կատարուիլ, եթէ չունենայինք հաւատարիմ աղօթակիցներ եւ նիւթապէս աջակցողներ, որոնց համար Աստուծոյ փառք կուտանք: Նշեալ անձերու ծառայութիւնը կարծէք վարագոյրին ետեւ ընթանայ, սակայն անոնք կը ներդնեն իրենց ժամանակն ու դրամը՝ յաւիտենականութեան եւ Աստուծոյ Թագաւորութեան ընդարձակման համար:

Այս բոլորին մէջ մենք միասին կը հնազանդինք Տիրոջ պատուէրին՝ երթալով եւ Աւետարանը քարոզելով ամէն արարածի:

Հայաստանի ՄԱԸ

Ամբողջ օրով գործող քրիստոնէաներ

Յեւու 24:14-27

Աշխատող մարդիկ անմիջապէս կը հասկնան «ամբողջ օրով», «կէս ժամանակով», «ժամանակաւոր» եւ «մշտական» աշխատանք հասկացութիւնները: Ասոնք ցոյց կուտան աշխատանքի տեւողութիւնն ու յաճախականութիւնը:

Տէր Յիսուսը կրնար այս նոյն բառերով նկարագրել Իր հետեւորդներուն: Անոր աշակերտները եւ Իրեն հետեւող կանանց խումբը ամբողջ օրով հետեւորդներ էին (Ղուկ. 9:1): Կային նաեւ 72 «կէս ժամանակով» հետեւորդներ (Ղուկ. 10:1): Կրնանք ըսել, որ Յիսուսն ուներ նաեւ պատահական հետեւորդներ՝ մարդիկ, որոնք կու գային Անոր խօսքը լսելու (Ղուկ. 9:11): Հոգեգալուստէն (Պենտեկոստէն) ետք եկեղեցին արագ անց, եւ թէեւ այնտեղ կային «կէս ժամանակով» գործունէութիւն ունեցողներ եւ պատահական մարդիկ, սակայն շատերը Քրիստոսի ամբողջ օրով գործող հետեւորդներ էին, եւ անոնց թիւը օրեց օր կ'աւելնար (Գործք 2:41):

Ամբողջ օրով գործող քրիստոնեաներ

«Ուստի, իմ սիրելի եղբայրներս, հաստատո՛ւն եւ անշա՛րժ կեցէք եւ ամէն ատեն աւելցէ՛ք Տէրոջը գործին մէջ, զիսնապով թէ՛ ձեր աշխատութիւնը պարսպ չէ Տէրոջմով» (Ա Կորնթ. 15:58):

Կէս ժամանակով գործող քրիստոնեաներ

«Չէք կրնար վայելել Տէրոջը սեղանէն ու դեւերուն սեղանէն: Նախանձի՛ գրգռենք Տէրը. միթէ մենք անկէ գօրատո՛ր ենք» (Ա Կորնթ. 10:21):

Պատահական քրիստոնեաներ

«Քանզի շատերը բժշկեց, այնպէս որ ցաւ ունեցողներ վրան կը դիգուէին, որպէս զի իրեն դաշին» (Մարկ. 3:10):

Ժամանակաւոր քրիստոնեաներ

«Ասո՛ր համար ձեզի ըսի թէ մէ՛կը չի կրնար ինծի գալ, եթէ իմ Հօրմէս տրուած չղկայ անոր» (Յովհ. 6:66):

Աստուած ի՞նչ տեսակ հաւատացեալներ կ'ուզէ: Արդեօք զիտե՞նք, թէ որ դասակարգին կը պատկանինք:

«Ուրեմն, ո՛վ Իսրայէլ, քու Տէր Աստուածդ քեզմէ ի՞նչ կը պահանջէ: Միայն քու Տէր Աստուծմէդ վախնալ, իր ճամբաներուն մէջ քալել եւ զինք սիրել: Նաեւ քու բոլոր սրտովդ ու բոլոր հոգիովդ քու Տէր Աստուածդ պաշտել եւ Տէրոջը պատուիրանքներն ու կանոնները պահել, որոնք եւ այսօր քեզի կը յայտնեմ, որպէս զի քեզի աղէկ ըլլայ» (Բ Օր. 10:12-13):

Աստուած կը փնտռէ ամբողջ օրով գործող, մշտական քրիստոնէաներ: Մենք կրնանք ընտրել, թէ որուն կ'ուզենք պատկանիլ՝ Աստուծո՞յ, թէ՞ չարին (Յեսու 24:14-15): Չենք կրնար կէս ժամանակով, պատահական կամ ժամանակաւոր քրիստոնէաներ ըլլալ: Այսպիսիները կը խաբեն իրենք զիրենք: Զրիստոս հետեւեալը կ'ըսէ անոնց, որոնք առաջնահերթութիւն կու տան իրենց գործին ու զուարճանքին.

«Ով որ ձեռքը մանին վրայ կը դնէ ու ետին կը նայի, Աստուծոյ թագաւորութեանը յարմար չէ» (Ղուկ. 9:62):

Նախքան «կէս ժամանակով» քրիստոնէայ մատնանշելը, ճշդէ՛, թէ դուն ո՞ր խումբին կը պատկանիս: Կրնա՞ս անկեղծութեամբ ըսել, թէ ամբողջ օրով գործող, մշտական քրիստոնէայ ես:

«Եւ ամենուն կ'ըսէր. «Եթէ մէկը կ'ուզէ իմ ետեւէս գալ, թող իր անձը ուրանայ եւ ամէն օր իր խաչը վերցնէ ու իմ ետեւէս գայ: Վասն զի ով որ կ'ուզէ իր անձը սպրեցնել, պիտի կորսնցնէ զանիկա եւ ով որ ինծի համար իր անձը կորսնցնէ, պիտի սպրեցնէ զանիկա» (Ղուկ. 9:23-24):

Աստուած ամբողջ օրով գործող մշակներ կը փնտռէ:

Վեր.՝ Յովսէփ Յովսէփեան

Մանկապատանեկան ծառայութեան կարելորդութիւնը

«Գացէ՛ք բոլոր աշխարհ ու աւետարանը քարոզեցէ՛ք բոլոր ստեղծուածներուն» (Մարկ. 16:15)

Եթէ բժիշկներուն հարցնենք՝ ո՞րն է աւելի դիւրին՝ հիւանդութեան կանխարգիլո՞ւմը, բուժո՞ւմը, թէ՞ բարդութիւններու հետեւանքները, անոնց պատասխանը միանշանակ պիտի ըլլայ՝ կանխարգիլումը: Ինչո՞ւ: Որովհետեւ, երբ հիւանդութիւններու ախտանիշները ժամանակին ճանչցուին, կարելի է կանխել բուն հիւանդութիւնը:

Իսկ եթէ նոյն հարցումը ուղղենք աւետարանիչներուն, քարոզիչնե-

րուն կամ միսիոնարներուն, որոնք ամէն ջանք ի գործ կը դնեն Աստուծոյ Խօսքը տարածելու համար, թէ՛ ո՞րն է աւելի դիւրին՝ Աստուծոյ Խօսքը մանուկներո՞ւն փոխանցել, որոնք դեռ չեն ընկած մեղքի հիւանդութեան մէջ (այսինքն՝ կանխարգելել), թէ՛ չափահասներո՞ւն, որոնք արդէն ճաշակած են մեղքի հետեւանքները՝ (բուժել), թէ՛ մեռածներուն (բարդութիւնները), ապա անոնց պատասխանը պիտի ըլլայ՝ մանուկներուն: Ինչո՞ւ: Քանի որ մանուկները բաց սիրտ ունին եւ պարզ մանկական հաւատքով կը ստանան Տիրոջ տուած փրկութեան պարգէնը:

Ծնողքի պատասխանատուութիւնը ինքնին բարդ գործ է, եւ իւրաքանչիւր ծնող կ'ուզէ իր զաւակին բարիքը: Իւրաքանչիւրը ունի իր մօտեցումներն ու դաստիարակութեան առաջնահերթութիւնները: Ոմանք կարելոր կը նկատեն, որ իրենց զաւակները մարգուին՝ առողջ ըլլալու եւ ինքզինքը ու հարազատներին պաշտպանելու համար: Բայց Տէրը կ'ըսէ՝ «Ես եմ ապաւէնը եւ ժայռը»: Ոմանք իրենց զաւակներուն կը դրկեն տարբեր դասընթացներու՝ մտաւոր զարգացման համար: Բայց Տէրը կ'ըսէ՝ *«Աճեցէ՛ք մեր Տէր ու Փրկիչ Յիսուս Քրիստոսին շնորհքովը ու գիտութիւնովը»*: Բայց ծնողներու, խնամակալներու մեծամասնութիւնը չի մտածեր, որ իրենց զաւակները, ֆիզիկական, նիւթական եւ մտային կարիքներու կողքին, ունին նաեւ հոգեւոր կարիք մը՝ Աստուծոյ փնտռտուքը եւ Աստուծոյ Խօսքով լեցուիլը:

Այո՛, լաւ է մտածել երեխայի կեանքի բոլոր կողմերուն մասին, բայց պէտք չէ անտեսել հոգեւոր ոլորտը: Որովհետեւ եթէ այդ դաշտը բաց մնայ, անիկա պիտի լեցուի աշխարհային ցանկութիւններով եւ զաւակները Աստուծմէ պիտի հեռանան:

Աստուածաշունչը բազում պատուիրաններ ունի՝ Աւետարանը տարածելու եւ հոգեւորապէս մարդկանց օգնելու: Եթէ Աստուծոյ Խօսքը Առակ. 22:6-ին մէջ կ'ըսէ. *«Կրթէ՛ մանուկը իր ճամբան սկսած ատենը, որպէս զի իր ծերութեան ատենն ալ անկէ չխտորի»*, ուրեմն պէտք է մանկութիւնը պէտք ըլլայ այն փուլը, ուր մանուկներին պէտք է ուսուցանել Աստուծոյ Խօսքը: Պէտք է առաջնորդել զանոնք, որ կարենան հասկնալ ընթերցածը, եւ ըլլալ անոնց նեցուկ՝ օգնելով հնազանդի Խօսքին:

Տէրը մեծ կարեւորութիւն կուտայ մանուկներու աւետարան-
չութեան: Ան մեզ պատուիրեց. «*Գացէ՛ք բոլոր աշխարհ ու աւետա-
րանը քարոզեցէ՛ք բոլոր ստեղծուածներուն*» (Մարկ. 16:15): «Ստեղ-
ծուածներուն» ըսելով նկատի ունի բոլոր տարիքի մարդիկ, նե-
րառեալ մանուկները: Մանուկներուն մեղքի եւ Փրկիչ Տէր Յիսու-
սի մասին սորվեցնելը՝ մեր՝ ծնողներուս, տատիկ-պապիկներուս եւ
ուսուցիչներուս պատասխանատուութիւնն է:

2016 թուականէն ի վեր ACM-ի անձնակազմով Աւետարանը կը
տարածենք հասանելի վայրերու մէջ՝ տարբեր տարիքային խում-
բերուն մէջ (6-15 տարեկան): Տարուան ընթացքին կը կազմակեր-
պենք տարբեր տօնական խմբակներ: Ունենք երկու շաբաթը մէկ,
ամիսը մէկ եւ տօնական օրերու խմբակներ: Երբեմն կը զարմա-
նանք, թէ ինչպէս Տէրը առաջնորդած է այնպիսի վայրեր, ուր գրե-
թէ անհնար է ուրիշ կազմակերպութիւններու մուտքը: Սա Տիրոջ
շնորհքն է՝ որ կրնանք այդպիսի վայրեր Աւետարանը հասցնել ոչ
միայն մանուկներուն, այլեւ անոնց ծնողներուն եւ ուսուցիչներուն:

Եկէ՛ք ըլլանք Խօսքը կատարողներ եւ ոչ միայն լսողներ: Թո՛ղ Տէ-
րը օրհնէ եւ իմաստութեամբ առաջնորդէ, որ մնանք Իր Խօսքին
մէջ:

Աղօթող եղէ՛ք մեր անձնակազմին եւ ծառայութիւններուն հա-
մար, որ Տէրը առողջ պահէ մեզ, օրհնէ եւ նոր դռներ բանայ՝ փառք
տալով Իր անունին:

ACM